

ականջ դնիս, էդա յըմեն բանէն աղէկ ի, ըս տարը չէրթաս, էլ Դաւթը վերայ չըս կէրի:

153. Մէլըբ դարձաւ խիւքեով մարդերու վերայ:

— Գնացէ՛ք, ձի հեօղ արէք, տէրթանք Դաւթը վերայ կուի:

Ըսին. — Մէլըբ, յէս օր դիւ մի թեաղեաւուրն իս, յառէջ քի կըսինք մ'էրթայ Դաւթը վերայ կուի. ապա վուր դիւ կէրթաս. ինչ ըսինք քի էլ՝ Մէլըբ, ահա՛ (բեղը բռնեցով), քիւ էրթալ տը փօշմընիս, դէ՛, դնա՛. է՛, վուր յըմեն էկան, մինք էլ տէրթանք, ինչ էնինք:

154. Մէլըբ կընը ուր ասկեար կը ժողուի, վուր էլ հասաւ հասպ չկայ, վուր էլ հասաւ ու հաշիւ չկայ:

Կընը ուր հեօղ կէնի, խիտ ասկեարըն տը գեայ:

Մէր կըսի. — Մէլըբ, դիւ մ'էրթար, մէկ մարդմ բունը քիւ տեղ. ասկեար թը առնի, էրթայ Սասունայ վերայ կուի. դիւ վըէ՛ կէրթաս.

Կըսի. — Մարէ, իս չէրթամ, խաղի տղայ էրթայ, ըծը խամար կուի տէնի. էսքան ասկեար ժողուիւ իմ, ինչպէս առանց տէր թուղնիմ, իս կերթամ խիտ:

— Վուր դիւ տէրթաս, կըսի մէր, իսն էլ տը գեամ, մինակ չըմ թուղնը:

— Իտ տէրթամ, դիւ կնիկ իս, մի՛ գեա:

— Կգեամ, կըսի, իս չըմ դագըրը:

155. Մէրն էլ կը ժողուի քեառսուն աղջիկ, քեառսուն կնիկ, էրկու ձեռք շաւար քեշող կը բերի, էրկու ձեռք նաղարա զուռնայ կը բերի. էդ աղջկաիւն էլ խաղալիւ յապեով կը բերի:

156. Մէլըբ զօշում առաւ, զինքն էլ ընկեաւ յառէջ, կերթայ Սասունայ վերայ:

Գնաց Սասունայ մօտ, չաարբիւր էն տե դարկից, ասկեար, էն տե դրից:

Մէկ թիւղթ դրից Մէլըբն Յեօվանի վերայ:

157. — Յեօվան, կուի կէնիս, էրի իմ կուիւ, եօխսա՛ կտամ քիւ քեաղբը վերայ, ինչքամ որձ կայ, կապանիմ, քեաղաքն էլ կըակ կը թուղնիմ կը վառիմ:

158. Դաւիթն էլ ուր կսկիճուն, որ ՝ ժամատուն վառած ի տէրատէրբեր, սարկաւապտիւր սպանած ի, համա, էղած ի գէթ չըգտի, ինչ կէնի, կէրթայ չիւր յեվարին ճնճիւղ կոպանի, ճնճղքիւրաց խիտ էյաւ կընը<sup>2</sup>, էսու բան էդ ի, յիւրիչ գեօրծ չէնի: Վուր թիւղթ կգեայ Յեօվանին, էդա պառաւ կը լսի,

1 Թրք. — Ապա թէ ոչ:

2 Թրք. — Զբաղուել: